



**Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի  
հաշվիչ հանձնաժողովի  
(ընդհանուր ժողովի)**

**ՈՐՈՇՈՒՄ N Լ-1**

**ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության  
փոփոխությունը հաստատելու մասին**

09.09.2017թ.

ք.Երևան

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) հաշվիչ հանձնաժողովը,

հիմք ընդունելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 9.1 հոդվածի և կանոնադրության 7.11, 15.25 կետի 1-ին ենթակետի, 15.28, 15.30, 15.33 և 17.2 կետերի պահանջները, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 2013 թվականի փետրվարի 22-ի № 5/1-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի քվեարկության արդյունքների ամփոփման կարգի» 33-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները,

հաշվի առնելով «ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության (1.5 կետի) փոփոխության հաստատում» օրակարգային հարցով ՀՀ փաստաբանների պալատի 09.09.2017թ. ընդհանուր ժողովի արդյունքների ամփոփման մասին Պալատի հաշվիչ հանձնաժողովի թիվ 2-Ն արձանագրությունը,

***որոշեց՝***

1. Քվեաթերթիկներ ստացած ընդհանուր 1087 (մեկ հազար ութսունյոթ) փաստաբանների՝ 1041 (մեկ հազար քառասունմեկ) «Կողմ» (քվեաթերթիկ ստացածների 95.7%) ձայներով ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից հաստատված համարել (հաստատել) ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության 1.5 կետի հետևյալ փոփոխությունը՝

***«1.5 Փաստաբանների պալատի գտնվելու վայրի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ջաքիյան փող., շենք 7-2: Փոստային դասիչ՝ 0010»:***

2. Սահմանել, որ ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի որոշումը համարվում է ընդունված սույն որոշման հրապարակման պահից:

*Հաշվիչ հանձնաժողովի նախագահ՝*

*Ապետնակ Պողոսյան*

*Հաշվիչ հանձնաժողովի քարտուղար՝*

*Մարինե Ֆարմանյան*

*Անդամներ՝*

*Աշոտ Խլոյան*

*Արսեն Հարությունյան*

*Ջարուհի Հայրապետյան*

*Տիգրան Սարուխանյան*

*Աղավնի Մադոյան*

*Մարիաննա Մխիթարյան*

*Տիգրան Հայրապետյան*